«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ

Հաստատված է
Տնօրինական խորհրդի նիստում
«29» 08 2019թ.
Արձանագրություն № 2.

Հաստատում եմ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի
Տնօրեն՝ Ի. Վարդանյան
«02» 09 2019թ.

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2019

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման կարգը, ամփոփիչ ատեստավորման, հանձնաժողովների կազմավորման, ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման, ատեստավորման արդյունքների բողոքարկման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման» կարգը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամանները, «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում գործող այլ կարգեր:
3. Ամփոփիչ ատեստավորման նպատակն է պարզել Քոլեջի շրջանավարտի պատրաստման մակարդակի համապատասխանությունը Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական պետական չափորոշչի պահանջներին:

II. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

1. Ամփոփիչ ատեստավորումը շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն է՝ ամփոփիչ քննությունների ձևով:
2. Յուրաքանչյուր մասնագիտության համար, ըստ որակավորման աստիճանների, ամփոփիչ քննությունների քանակը որոշում է Քոլեջը՝ ելնելով պետական կրթական չափորոշիչների պահանջներից՝ այն ամրագրելով ուսումնական պլաններում:
3. Ամփոփիչ ատեստավորումները կարող են նախատեսվել ինչպես առանձին առարկաների, այնպես էլ հարակից առարկաների խմբերի համար:
4. Ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցաշարերը կազմվում են պետական կրթական չափորոշիչների հիման վրա մշակված առարկայական ծրագրերին համապատասխան:
5. Ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցաշարերը կազմում են մասնագիտական ամբիոնները, քննարկվում՝ Մանկավարժական խորհրդում,

հաստատվում՝ Տնօրինական խորհրդի նիստում և շրջանավարտներին է տրամադրվում ոչ ուշ, քան ամփոփիչ ատեստավորումից 2 ամիս առաջ:

6. Ամփոփիչ ատեստավորման յուրաքանչյուր քննություն ներառում է ստուգման 2 փուլ՝
   - գործնական ունակությունների ստուգում,
   - բանավոր կամ գրավոր քննություն:

III. ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Պետական որակավորող հանձնաժողովը՝ կազմված նախագահից, նախագահի տեղակալից և հանձնաժողովի անդամներից, ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարի և գործում տվյալ օրացուցային տարվա ընթացքում:
2. Հանձնաժողովի կազմը պետք է կազմված լինի առնվազն 5 հոգուց:
3. Պետական որակավորող հանձնաժողովի նախագահին նշանակում է, ըստ մասնագիտական ուսումնական հաստատության ենթակայության, նշանակում է համապատասխան նախարարությունը (գերատեսչությունը)՝ մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի առաջարկությամբ, տվյալ ոլորտի առավել բարձրակարգ մասնագետների թվից, որոնք չեն աշխատում տվյալ ուսումնական հաստատությունում:
4. Պետական որակավորող հանձնաժողովում, որպես նախագահի տեղակալ, ընդգրկվում է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը կամ տնօրենի տեղակալը (տեղակալները): Պետական որակավորող հանձնաժողովի կազմում ընդգրկվում է քարտուղարը, որին նշանակում է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը՝ հաստատության աշխատակիցների կազմից:
5. Պետական որակավորող հանձնաժողովի կազմում, որպես անդամներ, ընդգրկվում են համապատասխան ամբիոնների (ցիկլային (առարկայական) հանձնաժողովների) վարիչները, դասախոսները:
6. Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով կարող են հրավիրվել նաև համապատասխան ոլորտի գործատուներ, նրանց ներկայացուցիչներ, այլ մասնագիտական, այդ թվում և բարձրագույն, ուսումնական հաստատությունների մասնագետներ: Պետական որակավորող հանձնաժողովի անվանական կազմը իր հրամանով հաստատում է մասնագիտական

ուսումնական հաստատության տնօրենը՝ պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքները սկսելուց առնվազն երկու շաբաթ առաջ:

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սույն կարգով և Քոլեջի հաստատած ընթացակարգերով, մեթոդական ուղեցույցներով:
8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն են՝
   - մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների, նրանց ստացած մասնագիտության գծով ինքնուրույն աշխատանքային գործունեություն իրականացնելու պատրաստականության ստուգումը և գնահատումը,
   - շրջանավարտներին համապատասխան որակավորում շնորհելու և պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) տալու հարցի որոշումը,
   - մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագետների և արհեստավորների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը:
9. Պետական որակավորող հանձնաժողովների աշխատանքները կազմակերպվում են մասնագիտական ուսումնական հաստատության տվյալ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
10. Ամփոփիչ ստուգման թույլատրվում են այն ուսանողները, ովքեր կատարել են տվյալ մասնագիտության ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով նախատեսված բոլոր պահանջները:
11. Յուրաքանչյուր պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը, համաձայնեցված հանձնաժողովի նախագահի հետ, ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի ներկայացմամբ հաստատում է հաստատության տնօրենը:
12. Տվյալ մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգումների միջև եղած ժամանակահատվածը սահմանվում 5-7 օր:
13. Պետական քննությունների քանակը սահմանվում է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչի պահանջներին կամ ուսումնական պլանին համապատասխան:

IV. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

1. Ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը:

2. Ամփոփիչ ատեստավորման ենթակա շրջանավարտների ցանկը հաստատվում է Քոլեջի տնօրենի հրամանով:
3. Ամփոփիչ ատեստավորման արդյունքները գնահատվում են՝ «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»՝ ըստ Քոլեջում ընդունված գնահատման սանդղակի:
   Ամփոփիչ ատեստավորման գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո:
4. Հիմք ընդունելով ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների վերաբերյալ արձանագրությունը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում՝ շրջանավարտներին համապատասխան որակավորում շնորհելու և նրան դիպլոմ տալու մասին: Բացասական («անբավարար») արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և դիպլոմ չի տրվում:
5. Մասնագիտական ուսումնական հաստատության շրջանավարտին, որը ուսումնական պլանով նախատեսված առարկաների տարբերակված ստուգարքների (կիսամյակային գնահատականների) և քննությունների 75%-ից ոչ պակասը հանձնել է «գերազանց», իսկ մնացած առարկաները՝ «լավ» գնահատականներով, միաժամանակ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) պաշտպանել կամ պետական քննությունները հանձնել է «գերազանց» գնահատականներով տրվում է գերազանցության դիպլոմ:
6. Պետական որակավորող հանձնաժողովի որոշումները դիպլոմային նախագծի (աշխատանքի) և պետական քննությունների ժամանակ դրսևորած գիտելիքների գնահատականի, ինչպես նաև որակավորում շնորհելու և դիպլոմ (գերազանցության կամ ոչ գերազանցության) տալու մասին ընդունվում են պետական որակավորող հանձնաժողովի փակ նիստում՝ բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցողների ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում նախագահի ձայնը որոշիչ է:
7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարն արձանագրում է համաձայն պետական գերատեսչական մարմնի կողմից հաստատված հավելվածների: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները: Արձանագրությունները պահվում են Քոլեջում:
8. Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովի նախագահը մեկ շաբաթվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմին և պատճենը

նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենին:

9. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը քննարկվում է Քոլեջի Տնօրինական խորհրդում, որի հիման վրա մշակվում են ուսումնական գործընթացի բարելավման վերաբերյալ առաջարկություններ:
10. Ամփոփիչ ատեստավորման քննություններն անցկացվում են հետևյալ ընթացակարգային պահանջների համաձայն.
    - շրջանավարտի գործնական ունակություններն ատեստավորվում է քննական տոմսով, որն ընդգրկում է 3-4 հարց,
    - շրջանավարտն իրավունք ունի քննական տոմսը փոխել միայն մեկ անգամ, սակայն դա նվազեցնում է վերջնական գնահատականը մեկ միավորով,
    - պետական քննության կամ դիպլոմային նախագծի (աշխատանքի) պաշտպանության տևողությունը, որպես կանոն, չպետք է գերազանցի 30 րոպեն յուրաքանչյուր ուսանողի համար,
    - դիպլոմային նախագծի (աշխատանքի) բովանդակությունը ներկայացնելու համար ուսանողին տրվում է մինչև 20 րոպե ժամանակ,
    - քննատոմսի յուրաքանչյուր հարց գնահատվում է՝ «գերազանց» /10-9/, «լավ» /8-7/, «բավարար» /6-4/ և «անբավարար» /3-1/, որից հետո հաշվարկվում է միջին թվաբանականը,
    - հանձնաժողովի անդամների լրացուցիչ կամ ուղղորդող հարցերը պետք է լինեն տոմսում ընդգրկված հարցերի շրջանակում,

    բ/ առարկայական բանավոր քննություններ.
    - տոմսն ընդգրկում է 2-3 հարց, ինչպես նաև կարող է լինել իրավիճակային խնդիրներ:
11. Որևէ առարկայի ամփոփիչ քննությունից «անբավարար» ստանալը շրջանավարտին չի զրկում մյուս առարկաների քննությունները հանձնելու իրավունքից:
12. Դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին տրվում են ուսումնառության լրիվ կուրսը ավարտելու մասին տեղեկանք և սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք:
13. Երկրորդ անգամ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին թույլատրվում է վերականգնվել տվյալ

մասնագիտության վերջին կուրսում՝ կրկնելով այդ ամբողջ կուրսի ծրագրային նյութը: Դիպլոմային նախագծի (աշխատանքի) պաշտպանություն կամ պետական քննությունների հանձնում միևնույն առարկայից երրորդ անգամ չի թույլատրվում:

14. Դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին թույլատրվում է վերահանձնել դիպլոմային նախագիծը (աշխատանքը) կամ պետական քննությունները ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո 3 տարվա ընթացքում:
15. Ուսանողը պետական քննությունները վերահանձնելիս հանձնում է քննություններ այն առարկաներից, որոնք նախատեսված են եղել նրա ավարտման տարում գործող ուսումնական պլանով: Մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտելուց երեք տարուց հետո պետական քննությունների վերահանձնման թույլտվությունը տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
16. Գնահատականի լրացուցիչ քննարկումն ու բողոքարկումը իրականացվում է Քոլեջում գործող կարգի համաձայն: